Ծառս ծաղկեցավ

Ծառս ծաղկեցավ, ծաղկեցավ, ծառ կայնեցավ,
Կանաչ ու կարմիր՝ մեր թագավորն էր:

Ծաղիկ բացվեցավ, բացվեցավ, վառ ծաղկեցավ,
Անթառամ ծաղիկ՝ մեր թագուհին էր:

Թագվոր բարով, հազար բարով, հազար բարով,
Կարմիր ծաղիկ տերևներով, տերևներով,
Աստվածածին արևդ օրշնիս,
Դու վարդ իս բացված թփերով:

Մեր թագվորն էր աջ, խաչկոթ՝ խաչ ու մաչ,
Խաչկապն էր կարմիր, արևն էր կանաչ:

Գացեք, բերեք գութան չոլեն,
Բերեք դրեք դարբասխանեն,
Ձնդրիկ զարգունք սուրբ սեղանին,
Օրշնինք ըզթագվոր զուր թագուհին:

Ծառ խնկենին որ ծաղկեցավ,
Սուրբ խաչ վրեն որ բազմեցավ,
Թագվոր աթոռք ուրախացավ,
Խերն ու բարին մըր թագվորին,
Խերն ու բարին մըր թագվորին,
Օրշնինք ըզթագվոր զուր թագուհին,
Խերն ու բարին մըր թագվորին: